

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԸ ՈՐՊԵՍ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕԲՅԵԿՏ

ԱՆԻ ԴՈՒՍՈՅԱՆ

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

Բանալի բառեր. տնտեսության պետական հատված, պետական
ձեռնարկատիրություն, պետական կառավարում, պետական սեփականություն

ՀՀ կառավարության ծրագրում (2017-2022թթ.) առանձնահատուկ ուշադրություն դարձվեց պետական գույքի կառավարմանը, որտեղ նշվեց. «ՀՀ կառավարության կարևոր գործառույթներից է պետական սեփականություն հանդիսացող գույքի արդյունավետ կառավարումը: Պետական գույքի կառավարման արդյունավետության խնդիրը լուծելու համար պետական գույքի կառավարման քաղաքականության հիմնական նպատակներն են լինելու՝

➤ պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացումը, վարչարարության պարզեցումը,

➤ պետություն-մասնավոր հատված գործընկերության համար բարենպաստ պայմանների ստեղծումը, որը կապահովի պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացումը,

➤ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների շահութաբերության բարձրացումը,

➤ առևտրային բարձր պահանջարկ ունեցող պետական գույքի սեփականության իրավունքի օտարումը, որը կապահովի հանրային օգտակարության բարձրացումը»¹:

Ձեռնարկատիրական գործունեության ձևերը երեքն են՝ մասնավոր, պետական և խառը: Մասնավոր ձեռնարկատիրությունը ծագել է շուկայական հարաբերությունների հետ միասին և մինչև օրս ունի գերակշիռ տեղ աշխարհում: Այս ձևը ընդգրկել է տնտեսական կյանքում պետության մասնակցության լրիվ բացակայության ժամանակահատվածը: Պետական ձեռնարկատիրության ձևը տնտեսագետներից շատերը անվանում են նաև «հասարակական ձեռնարկատիրություն», իսկ այդ հասկացությունն ինքնին հուշում է, որ դա գործունեության այնպիսի ձև է, որտեղ համատեղվում են նրա սուբյեկտների հասարակական և ձեռնարկատիրական հայեցակետերը: Դրանցից առաջինը ենթադրում է, որ տվյալ ձեռնարկությունն ունի նաև գործունեության հասարակական նպատակներ, հասարակական կամ, որ նույն

¹ Տես՝ ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 646-Ա որոշումը, ՀՀ կառավարության պաշտոնական կայք՝ https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2017/06/17_646_1.pdf

է, պետական սեփականություն և գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողություն: Ձեռնարկատիրական հայեցակետը ներառում է՝

- ձեռնարկությունների ինքնավարությունը կառավարման ապարատից,
- այս ձեռնարկությունների նպատակների իրականացումը

գործունեության հենց ձեռնարկատիրության սկզբունքներով:

Կարելի է ասել, որ հասարակական կամ պետական ձեռնարկությունը շուկայի պայմաններում տնտեսական գործունեության մի օղակ է, որը լրիվ կամ մասնակի ձևով համարվում է պետական սեփականություն, հասարակական վերահսկողության տակ իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն՝ կառավարման պետական ապարատի նկատմամբ ինքնավարության սկզբունքով: Տվյալ բնորոշումն պահանջում է պարզել, կարո՞ղ է արդյոք յուրաքանչյուր պետական ձեռնարկություն համարվել ձեռնարկատիրության և պետական ձեռնարկատիրության սուբյեկտ: Այս հարցին հնարավոր է պատասխանել այն դեպքում, երբ կձշտվեն պետական ձեռնարկատիրության նպատակները, որի շուրջ մասնագիտական գրականության մեջ առկա են հիմնականում երեք տեսակետներ: Այսպես, տնտեսագետների մի խմբի կարծիքով դա շահույթի ստացումն է, մեկ այլ խմբի կարծիքով՝ հասարակական պահանջումների բավարարումը, իսկ երրորդ խումբը, որը ներկայացնում է կոմունիստներին և սոցիալիստներին, գտնում է, որ շուկայի պայմաններում պետական ձեռնարկատիրության նպատակը կապիտալիստական շահագործման համակարգի պահպանումն է²:

Ներկայումս արմատապես փոխվում է պետության դերը տնտեսական գրեթե բոլոր գործընթացների կառավարման գործում: Արդեն ակնհայտ է դարձել (հատկապես 2008թ. ձգնաժամից հետո) «համատարած» շուկայի գաղափարի անընդունակությունը, երբ տնտեսական բոլոր գործընթացները թողնվել էին շուկայական ուժերի (կամ իշխանության) և մեխանիզմների (ինքընա) կարգավորմանը: Այդպիսի մոտեցումը, ինչպես ցույց տվեց պրակտիկան, հղի է կործանարար ձգնաժամերով և գործնականում իրեն չի արդարացնում աշխարհի և ոչ մի երկրում³: Դրա հետ մեկտեղ անտարակույս է. «համատարած բարօրության պետություն» ունեցող հասարակության կառուցման անհնարինությունը, երբ ամեն ինչ կարգավորվում է պետության

² Թամազյան Ա. «Ձեռնարկատիրություն, մրցակցություն և ռիսկ», Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2014թ., էջ 37-39:

³ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս, օրինակ՝ «Ֆինանսատնտեսական ձգնաժամը Հայաստանում և աշխարհում», Եր., 2009թ., Հարությունյան Լ. «Համաշխարհային ֆինանսատնտեսական ձգնաժամ. պատճառներ, հակաձգնաժամային միջոցառումներ և դասեր», Եր., 2009թ., Հարությունյան Ս., Խաչատրյան Վ. «ձգնաժամ. Մակրոտնտեսական իրավիճակն աշխարհում և Հայաստանում», Եր., 2010թ. և Հարությունյան Վ., Սարգսյան Կ. «Պետական հակաձգնաժամային քաղաքականության միջազգային փորձը և դրա վերլուծությունը», Եր., 2014թ.:

կողմից, իսկ բնականոն գործող շուկայական մեխանիզմներն արգելափակվում են⁴: Այդ դեպքում կորսվում է ամբողջ տնտեսության և նրա առանձին օղակների արդյունավետությունը: Այս առնչությամբ հետձգնաժամային, ըստ էության, նոր պայմաններում անհրաժեշտություն է ծագում կառուցելու ավելի ձկուն, և դրա հետ մեկտեղ նաև, ավելի հզոր պետական կառավարման համակարգեր, որոնք հենվում են բուն հիմնախնդրի բազմակողմանի հավասարակշռված սկզբունքների վրա, և թույլ չեն տա հայտնվել վերը նշված ծայրահեղությունների մեջ: Հայաստանի պետական կառավարման «նոր» համակարգի կարևոր տարրերից է տնտեսության պետական հատվածը, որի դերը գործնականում աշխարհի բոլոր երկրներում ոչ միայն մեծ է, այլև շարունակում է աճել: Սակայն փորձը ցույց է տալիս, որ շուկայական տնտեսության կառուցման ընթացքում պետական կառավարման ոլորտում թույլ են տրվել մի շարք բացթողումներ, այդ թվում նաև պետական հատվածի (պետական ձեռնարկատիրության) հետ «աշխատանքում»: Մեր կարծիքով գործերի այդպիսի վիճակի առանցքային պատճառներից մեկը տարերայնորեն ձևավորված կառավարման տնտեսական գաղափարախոսությունն է, ինչի պատճառը տնտեսագիտական կատեգորիաների խառնաշփոթն է: Այդպիսի կատեգորիաների շարքին կարելի է դասել՝ պետական հատված, պետական գույք, պետական սեփականություն, պետական ֆինանսներ, պետական գույքի կառավարում, պետական միջամտություն և այլն: Նշված բոլորը, մի կողմից, փոխհատվող են, իսկ մյուս կողմից՝ կոմպլիմենտար: Այդ փաստով էլ պայմանավորված է որոշակի խառնաշփոթը, որը ծագել է պետական հատվածի և առանձին ոլորտների կառավարման հասկացության հետ⁵:

Այդ նպատակով քննարկենք պետական հատվածի բովանդակային սահմանումը: Այստեղ, ընդհանրապես ասած, առկա են անվերջանալի թվացող տարընթերցումներ: Խնդիրն այն է, որ պետական հատվածի որոշման և բաղադրամասերի բաժանման՝ որպես ինքնուրույն հասկացություն գոյություն չունի: Ինչպես իրավացիորեն նշել են Է. Բ. Ատկինսոնը և Ջ. Է. Ստիգլիցը⁶, պետական հատվածի բուն հասկացությունը կախված է մեր կողմից

⁴ Տե՛ս, օրինակ, “Why Liberty: Your Life, Your Choices, Your Future”, Edited by Tom G. Palmer, The Atlas Network, Washington, 2013. <https://www.atlasnetwork.org/book/why-liberty>.

⁵ Այդ հիմնախնդիրների հետ կապված տե՛ս, օրինակ Գումբոլդտ, Կարլ Կառլ ֆոն. О пределах государственной деятельности. М.: Социум, Три квадрата, 2003, с. 104-134, Մարկոսյան Ա. Խ., «Պետությունը և շուկան», գիրք I, Եր., 2000թ., էջ 44-50, Դավոյան Ս. «Պետական սեփականության կառավարում. մեթոդաբանական և ինստիտուցիոնալ հիմքեր», Եր., 2003թ., Դավոյան Ս., Մարկոսյան Ա. «Վերափոխումները անցումային տնտեսություններում», Եր., 2003թ., Մարկոսյան Ա., Մաթևոսյան Է. «Պետությունը և ձեռնարկատիրությունը», Եր., 2005թ., էջ 61-66: Մարկոսյան Ա. Եր., 2015թ.:

⁶ Аткинсон Э.Б., Стиглиц Дж. Э. «Лекции по экономической теории государственного сектора», Учебник, Пер. с англ., под ред. Л.Л.Любимова. – М.: Аспект Пресс, 1995, стр. 32.

օգտագործվող չափանիշներից, ինչպիսիք են շուկայական և ոչ շուկայական արտադրությունը, պետական հսկողության աստիճանը ու ձևերը և այլն: Սակայն տնտեսության տարբեր հատվածների միջև հնարավոր տարբերություններն այդքան էլ ակնհայտ չեն և ըստ որոշ հատկանիշների պետության գործունեությունը նման է մասնավորի գործունեությանը: Օրինակ, ԱՄՆ-ում Թենեսիի հովտի վարչակազմը, Բնակարանային շինարարության համադաշնային գործակալությունը և Ատոմային էներգիայի գործակալությունը բավական ինքնուրույն կազմակերպություններ են և կարող են մեկնաբանվել որպես տնտեսության մասնավոր հատվածի տարրեր: Մի շարք դեպքերում, որպեսզի ուրվագծվի պետական հատվածի գործունեության ոլորտը, օգտագործվում են հանրային շահի չափանիշները: Սակայն այս մոտեցումը արդարացիորեն քննադատվում է այն պատճառաբանությամբ, որ այդպիսի հայեցակարգը մշուշոտ է, քանի որ դրանք ժամանակին համընթաց կարող են փոխվել: Բացի այդ, հանրային շահի վկայակոչումը տեղին չէ, քանի որ այդ բնույթի գործունեության շատ տեսակներով (այսպես կոչված ավանդական) ներկայումս զբաղվում են ինչպես խառը, այնպես էլ մասնավոր կազմակերպությունները (էլեկտրաէներգիայի արտադրություն և մատակարարում, գազի և ջրի մատակարարում, փոստի ծառայություններ և այլն): Սակայն որքան էլ դժվար լինի սահմանել պետական հատված հասկացությունը, գործնականում դրա անհրաժեշտություն կա, թեև այն առաջ է բերում կոշտ և բավական միանշանակ սահմանումներ: Բանն այն է, որ պետական հատվածը ոչ միայն պետական սեփականության ոլորտն է, այլ նաև պետական բյուջեն և անմիջապես պետության տնօրինման ներքո գտնվող մյուս ռեսուրսները: Թեև նման սահմանման դեպքում բառացիորեն կարելի է վիճարկել նշված բոլոր կետերը: Այսպես, այս սահմանմամբ պետական հատվածի փոխարեն հասկացվում է պետական սեփականությունը ավելացրած պետական ֆինանսները (պետական բյուջեն), ինչն իրավաչափ և համոզիչ չէ: «Տնտեսության պետական հատված» անվանումից հետևում է, որ այն ինչ որ բանի մաս է, ազգային տնտեսության «կտոր», որը բաղկացած է բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտներից: Պետական ֆինանսները տնտեսության և նրա բոլոր հատվածների գործունեության արդյունքներից մեկն են, և դրանք ոչ մի ձևով չեն կարող տեղավորվել պետական հատվածի սահմանման կազմում: Այդ նույն տրամաբանությամբ պետական սեփականությունը իրենից ներկայացնում է տնտեսվարող սուբյեկտների գործունեության գումարային արդյունք և այն խառնել պետական հատվածի հասկացության հետ նույնպես օրինաչափ չէ: Այս տեսանկյունից կարելի է համաձայնել, որ սեփականությունը, հանդիսանալով ձեռնարկատիրության հիմքը, դրանով իսկ պայմաններ է ստեղծում տնտեսավարման տվյալ սուբյեկտների ինքնուրույնության համար: Վերջին հաշվով այդ ինքնուրույնությունը հանգում է

ծեռնարկատիրության և ընտրության ազատությանը: Ձեռնարկատիրության ազատությունը տնտեսական ինքնուրույնության այն շրջանակն է, որի ներսում ձեռնարկատերն ազատ է իր ցանկություններում՝ նյութական, աշխատանքային և դրամական ռեսուրսներ ձեռք բերելու, արտադրություն կազմակերպելու և արտադրված ապրանքը (ծառայությունը) այս կամ այն շուկայում իրացնելու առումով⁷: Հաշվի առնելով վերոգրյալը, պետական հատվածի ճիշտ հասկացությանը ավելի մոտ է այն սահմանումը, որի համաձայն պետական հատվածը պետական ձեռնարկությունների, և հիմնարկների համակցությունն է: Նման մոտեցումը հենվում է իրավաբանական անձանց «կառավարելիության» վրա և հեռու է կապիտալ-սեփականության (արտադրության սեփականատիրոջ) և կապիտալ-գործառույթի (արտադրության կառավարիչի) հստակ տարանջատումից: Այս պարագայում բերված սահմանումից հետևում են երեք քննարկված կատեգորիաների միջև բավական թափանցիկ տարբերություններ: Պետական սեփականությունը բնութագրում է պետության նյութա-իրային կուտակային ներուժը: Դրան է վերաբերում պետության շարժական և անշարժ գույքը, ընդերքը և այլն: Այսինքն, սկզբունքորեն պետական սեփականությունն իրենից ներկայացնում է երկրի ազգային հարստության այն մասը, որը գտնվում է պետության ձեռքում: Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է տարբերել պետական գույք և պետական սեփականություն հասկացությունները: Առաջինն ավելի նեղ հասկացություն է, քան երկրորդը: Մեր կարծիքով, պետական գույքին են վերաբերում բոլոր ձեռակերտ տնտեսական օբյեկտները, իսկ պետական սեփականությանը՝ ամբողջ պետական գույքը ավելացրած բոլոր բնական օբյեկտները: Ներկայումս պետական գույքի այդպիսի ներկայացումը համընդհանուր չէ: Այսպես, օրինակ, ՌԴ-ում պետական սեփականության և պետական գույքի հասկացությունները միաձուլվել են մեկը մյուսի մեջ և օգտագործվում են որպես հոմանիշներ. «Անշարժ իրերին են վերաբերում հողամասերը, ընդերքի մասերը և այն ամենը, ինչը ամուր միացած է հողին, որոնց տեղափոխումն անհնար է՝ առանց նրանց նշանակալի վնաս հասցնելու»⁸: Հաջորդը հողված 132-ում ձեռնարկությունը նույնպես ամբողջությամբ ճանաչում է որպես անշարժ գույք. «Որպես իրավունքի օբյեկտ ձեռնարկություն է համարվում այն գույքային համալիրը, որն օգտագործվում է ձեռնարկատիրության համար: Ամբողջական գույքային համալիր հանդիսացող ձեռնարկությունը ճանաչվում է որպես անշարժ գույք»⁹: ՀՀ քաղօրը տալիս է անշարժ գույքի հետևյալ սահմանումը. «Անշարժ գույք են համարվում հողամասերը, ընդերքի մասերը,

⁷ Թամազյան Ա. «Ձեռնարկատիրություն, մրցակցություն և ռիսկ», Եր., 2014թ., էջ 19:

⁸ Гражданский кодекс Российской Федерации, Статья 130. Недвижимые и движимые вещи. <http://www.consultant.ru/>.

⁹ Там же, ст. 132.

մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմամյա տնկիները, ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները և հողին ամրակցված այլ գույքը, այսինքն՝ այն օբյեկտները, որոնք անհնար է հողից անջատել՝ առանց այդ գույքին կամ հողամասին վնաս պատճառելու կամ դրանց նշանակության փոփոխման, դադարման կամ նպատակային նշանակությամբ հետագա օգտագործման անհնարիանության»¹⁰, իսկ պետությունը դիտարկվում է մասնավոր անձանց հետ հավասար իրավունքներ ունեցող սուբյեկտի կարգավիճակում: Պետական գույքի սահմանումը տրվել է «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 2014թ.-ի վերջին, և ըստ սահմանման պետական գույք է համարվում Հայաստանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ և շարժական գույքը, ներառյալ՝

1) Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող շենքերը և շինությունները (նաև այլ պետություններում գտնվող) և դրանց սպասարկման և օգտագործման համար հատկացված պետական սեփականություն հանդիսացող հողամասերը.

2) առևտրային կազմակերպություններում պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերը (բաժնեմասերը).

3) սեփականության իրավունքով պետությանը պատկանող մտավոր սեփականության օբյեկտները և դրանց նկատմամբ իրավունքները.

4) պետությանը պատկանող գույքային իրավունքները¹¹:

Ամենայն հավանականությամբ սեփականության և գույքի նման ձևով մեկնաբանությունները կապված են անշարժ գույքի իրավաբանական և տնտեսագիտական մեկնաբանությունների միջև եղած տարբերություններով: Դրանով իսկ մենք տեսնում ենք սեփականության և գույքի հասկացությունների փոխարինումը անշարժ գույքի հասկացությամբ, ինչը խանգարում է պետական հատվածի և պետական սեփականության հասկացությունների մեթոդաբանական ճիշտ առանձնացումներին: Մի շարք դեպքերում նշված հակասությունները վերացնելու համար շրջանառության մեջ են մտցվում նոր մեկնաբանություններ: Օրինակ, առանձնացվում են պետական սեփականության բնական և տնտեսական օբյեկտները, ինչպես նաև մտավոր սեփականություն (կապիտալ) հասկացությունը:

Ի տարբերություն պետական սեփականության, պետական հատվածն իրենից ներկայացնելով տնտեսվարող սուբյեկտների համակցություն, որը զբաղված է ապրանքների և ծառայությունների արտադրությամբ, դրանով իսկ բնութագրում է պետության նյութա-իրային ներուժը: Պետական ֆինանսները ներկայացնում են ամբողջ ֆինանսները, որոնք գտնվում են պետու-

¹⁰ ՀՀ քաղ. օրենսգիրք, Հոդված 134. Անշարժ և շարժական գույքը. www.arlis.am: e

¹¹ «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենք, Հոդված 5, www.arlis.am:

թյան տնօրինության ներքո և բնութագրում են պետության ընթացիկ ֆինանսական ներուժը (եթե այդպիսի դրամական ազդեցատ դիտվի որպես երկրի Կենտրոնական բանկի ոսկու-արտարժույթի պաշարները, ապա այն բնութագրում է պետության կուտակային ֆինանսական ներուժը, սակայն այդ ռեսուրսը չի վերաբերում պետության ակտիվներին): Ակնհայտ է, որ նշված երեք տնտեսական կատեգորիաները ներհյուսված են միմյանց: Օրինակ, պետական ֆինանսները, ընդունելով պետական պատվերի ձև, կարող են ծախսվել ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական հատվածների կարիքների համար: Բացի այդ, պետական ֆինանսները կարող են ծախսվել տարբեր սոցիալական բնույթի և նշանակության ծրագրերի և կարիքների համար, որոնց իրականացումը կարող է դրված լինել մասնավոր հատվածի վրա: Այստեղից պարզ երևում է, որ պետական ֆինանսներ և պետական հատված հասկացությունները համարժեք չեն, սակայն միաժամանակ հակադիր էլ չեն միմյանց: Պետական գույքը նույն ձևով ևս կարող է գտնվել ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական հատվածների տնտեսավարող սուբյեկտների տիրապետման ներքո: Երկրորդ դեպքի օրինակ է կոնցեսիան կամ հավատարմագրային կառավարումը (trust management): Պետական սեփականության բնական օբյեկտների տեսանկյունից դրանք կարող են ժամանակավորապես ոչ մեկի կողմից էլ չօգտագործվել՝ շարունակելով մնալ պետության պոտենցիալ հարստություն:

Անհրաժեշտ է նշել, որ պետական հատվածի հասկացության վերը բերված պատկերացումը, չնայած իր բանավեճային բնույթին, մեր իրականությունում շարունակում է ընդունելի լինել ինչպես բազմաթիվ գիտնականների, այնպես էլ պետական ծառայողների կողմից: Այդ առնչությամբ հարց է առաջանում, թե որտեղից է առաջացել պետական հատվածի նման ձևով ոչ ճիշտ պատկերացումը և մեկնաբանությունը: Մեր կարծիքով դրանց ակունքները գտնվում են հայրենական մեկնաբանների և թարգմանիչների կողմից ժամանակակից տնտեսագիտության անգլո-սաքսոնական որոշ բառերայինների կամային մեկնաբանությունների հիմքում: Բնորոշ օրինակ կարող է հանդիսանալ Է. Բ. Ատկինսոնի և Ջ. Է. Ստիգլիցի հեղինակած գիրքը, որի վերնագիրը ռուսերեն թարգմանությամբ հնչում է որպես «Պետական հատվածի տնտեսագիտության դասեր» («Лекции по экономической теории государственного сектора»): Մինչդեռ անգլերեն բնօրինակում այն ունի հետևյալ վերնագիրը՝ «Lectures on public economics», ինչը ավելի ճիշտ կլինի թարգմանել որպես՝ «Հասարակական (հանրային) տնտեսագիտության դասախոսություններ»: Ընդգծենք, որ բնօրինակում խոսքը վերաբերում է «economics» բառերին, այսինքն տնտեսագիտությանը, այլ ոչ թե «economy» բառերին, այսինքն՝ տնտեսությանը: Նշված սխալը ավելի ընդգրծված հասկացվում (ընկալվում) է, եթե օգտագործենք հետևյալ անալոգիան

(համանմանությունը). «Մակրոտնտեսագիտության դասախոսություններ» («Lectures on macroeconomics»), նույն օրինաչափությամբ՝ «Մակրոտնտեսագիտության հատվածի տնտեսագիտության (տեսության) դասախոսություններ», մինչդեռ ոչ մի «մակրոտնտեսագիտության հատված» հասկացություն գոյություն չունի, իսկ մակրոտնտեսագիտությունը, որպես գիտելիքների բնագավառ զգալիորեն ավելի լայն է, քան թե որևէ հատվածի արտադրական կողմերը: Բերված օրինակը վկայում է ոչ ճիշտ մեկնաբանման մասին: Ներկայումս օգտագործվում է բառեզր, որը համապատասխանում է պետական հատվածի հասկացությանը՝ «public sector»: Օրինակ, Դ.Լ.Տրոտման-Դիկենսոնի «Economics of the public sector» արմատական աշխատությունում¹² խոսք է գնում հենց տնտեսվարող սուբյեկտների (իրավաբանական անձանց) համակցության մասին, այլ ոչ թե պետության գանձարանի կամ էլ գույքի մասին: Այսպիսով, ըստ երևույթին, սխալ չի լինի ասել, որ ինչպես հետխորհրդային տարածքում, այնպես էլ ՀՀ-ում պետական հատվածի ոլորտում ձևավորված ոչ ճիշտ գաղափարախոսությունը որոշակի չափով հիմնըված է եղել մեր իրականությունում արևմտյան գիտական ստանդարտների և բառերերի անհաջող ընդօրինակման վրա: Նկատենք նաև, որ պետական հատված մեկնաբանության նշված անձշտությունը այնքան էլ «անմեղ» չէ, որքան էլ որ այն կարող է թվալ առաջին հայացքից: Բանն այն է, որ պետական հատվածի որպես՝ տնտեսական կատեգորիայի ոչ ճիշտ ըմբռնումը ունի առնվազն երեք սկզբունքորեն կարևոր հետևանքներ: Առաջինը վերաբերում է պետական հատվածի գործունեության նորմատիվ-իրավական գործընթացների ապահովման սխալներին: Այդպիսի սխալների անմիջական արդյունքներն են պետական հատվածի բնականոն զարգացումը արգելակող իրավիճակները: Երկրորդն առնչվում է պետական հատվածի հստակ ուրվագծման դժվարությունը և դրա քանակական որոշակիության մասին հավաստի վիճակագրական տեղեկությունների հավաքման ապահովման անհնարինությունը: Պետական հատվածի մասին համապատասխան տեղեկությունների բացակայությունը բնական ձևով հնարավորություն չի տալիս (առնվազն՝ սահմանափակում է) դրա գործունեության և զարգացման վերաբերյալ ճշգրիտ վերլուծությունները և կանխատեսումները: Երրորդը կապված է պետական հատվածի կառավարման ոչ ճիշտ գաղափարախոսության ձևավորման հետ: Նման կարգի սխալների անմիջական արդյունք կարող է լինել ոչ միայն պետական հատվածի, այլև պետական սեփականության և ամբողջ ազգային տնտեսության վերաբերյալ կառավարման արտասահմանյան սխեմաների և հայեցակարգերի ձևավորումը:

¹² Trotman-Dickenson D.I. «Economics of the Public Sector» 1996, 508 pages.

ԱՆԻ ԴՈՒՆՈՅԱՆ

Տնտեսության պետական հատվածը որպես պետական կառավարման օբյեկտ
Բանալի բառեր. տնտեսության պետական հատված, պետական ձեռնարկատիրություն, պետական կառավարում, պետական սեփականություն, պետական գույք

Հեղինակը քննարկել է ձեռնարկատիրական գործունեության երեք ձևերի առավելություններն ու թերությունները, նոր պայմաններում պետության դերակատարման ուժեղացումը և կարգավորման կառուցակարգերը, պետական սեփականության, որպես հանրապետության ազգային հարստության կարևոր բաղկացուցիչ կառավարման արդյունավետության բարձրացման հիմնական ուղիները: Այդ գործում կարևորվել է “Պետական գույքի կառավարման մասին” ՀՀ օրենքի ընդունումը, ինչպես նաև ճշգրտվել է “հասարակական (հանրային) գույք” հասկացության վերաբերյալ տարբեր եզրաբանական մոտեցումները:

Ани ДОХОЯН

Государственный сектор экономики как объект государственного управления

Ключевые слова: государственный сектор экономики, государственное предпринимательство, государственное управление, государственная собственность

Автор статьи проанализировал преимущества и недостатки трех способов осуществления предпринимательской деятельности, усиление роли государства и механизмы регулирования в сложившейся новой ситуации, а также основные пути повышения эффективности управления государственной собственностью, как важнейшей составляющей национального богатства республики. Акцентируется роль и значение Закона РА «Об управлении государственной собственностью» в данном процессе. Кроме перечисленного, автор анализирует различные теоретические толкования определения «общественное (публичное) имущество».

Ани ДОКХОЯН

State sector of economy as an object of public administration

Key words: state sector of economy, state entrepreneurship, state administration, state property, state assets

In the program of the Government of the Republic of Armenia for 2017-2022 significant attention is paid to the problem of state property management and increasing the effectiveness of this process. As a result of privatization of state assets, which began in the 1990s, an economy based on private property was formed in Armenia (it is approximately 80% of the country's GDP is provided by the private sector). At the same time, to grade the “market failures” in RA, as in many other countries, the intervention and participation of the state is used, which is intensified during the period of economic crises. For this reason, at this stage, the role of the state in all spheres of the economy, including in the sphere of state property management, is radically changing.